ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2020թ. N 204-Ա

«ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հաշվի առնելով ՀՀ Պարետի 2020 թվականի մայիսի 3-ի N 63 որոշման Հավելված 13-ով Նախադպրոցական կրթության ոլորտի կազմակերպություններում կորոնավիրուսային հիվանդության (covid-19) տարածման կանխարգելման նպատակով սահմանված անվտանգության կանոնները՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ս/թ օգոստոսի 1-ից վերսկսել «Ջերմուկ համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ ՀՈԱԿ) գործունեությունը՝ ըստ առաջնահերթության ընդունելով այն երեխաներին, որոնց տնային խնամքը գործնականում հնարավոր չէ ապահովել ծնողների կամ խնամակալների աշխատանքը հեռավար ձևով կազմակերպելու անհնարինությամբ և/կամ այլ օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված: Երեխաների խնամքի և կրթության գործընթացը կազմակերպել բեռնաթափված խմբերով՝ դրանք դարձնելով 10-հոգանոց:

2. ՀՈԱԿ-ի տնօրեն Գ. Հովհաննիսյանին՝ հաստատության աշխատանքները կազմակերպելիս խստագույնս պահպանել ՀՀ պարետի 2020 թվականի մայիսի 3-ի N 63 որոշման Հավելված 13-ով (այսուհետ՝ Հավելված) սահմանված անվտանգության կանոնները, երեխաների խաղալու և պարապմունքների, սննդի և քնի ժամանակ նրանց միջև ապահովել 1,5-2 մ սոցիալական հեռավորություն, շարունակել հարկադիր պարապուրդի մեջ համարել կորոնավիրուսի ծանր հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբի աշխատողներին (ցանկը՝ ըստ Հավելվածի Ընդհանուր կանոնների 1-ին կետի):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՈԱԿ-ի տնօրեն Գ. Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հուլիսի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հուլիսի 2020թ. N 205-Ա

«ՋԵՐՄՈՒԿ-3 ԱՌՈՂՋԱՐԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼՎԱՑՔԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԳՐՈՒՄԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17 -ի N 6-Ն որոշման 2-րդ կետի, և հաշվի առնելով «Ջերմուկ-3 առողջարան» ՍՊ ընկերության դիմումը (մտից՝ 2020 թվականի հուլիսի 13-ի N 822)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ձևակերպել կառուցապատող «Ջերմուկ-3 առողջարան» ՍՊ ընկերության կողմից իրականացված Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 16 հասցեում գտնվող լվացքատան կառուցման շինարարության շահագործման փաստագրումը:
2. «Ջերմուկ-3 առողջարան» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031385 հաշվեհամարին մուծել 20 000 (քսան հազար) դրամ տեղական վճար՝ շինարարության ավարտը փաստագրելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին «Ջերմուկ-3 առողջարան» ՍՊ ընկերությանը իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020թ. N 206-Ա

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՕԲՅԵԿՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և պայմանագիրը ստորագրած կողմերի բանավոր համաձայնությամբ՝ **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Լուծել Ջերմուկ համայնքի ղեկավարի և ՀՀ Ոստիկանության Պետական Պահպանության գլխավոր վարչության Եղեգնաձորի պահպանության բաժնի միջև 2019 թվականի հունիսի 3-ին կնքված Օբյեկտի պահպանության իրականացման մասին N 74 պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀՈ ՊՊԳՎ Եղեգնաձորի պահպանության բաժնի պետին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020թ. N 207-Ա

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի ՀՀ Ոստիկանության Պետական պահպանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնին անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 38-Ա որոշումը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 8 հասցեում գտնվող Ջերմուկի համայնքապետարանի վարչական շենքի 47,9 քմ տարածքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ՀՀ Ոստիկանության Պետական պահպանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնին՝ ծառայություն իրականացնելու նպատակով: Տարածքի օգտագործման իրավունքի ժամկետը՝ մինչև 2025 թվականի հունիսի 1-ը:

2. ՀՀ Ոստիկանության Պետական պահպանության գլխավոր վարչության Եղեգնաձորի բաժնի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված տարածքի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման մասին պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հուլիսի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020թ. N 208-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 1,31 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 1,31 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2020թ. N 209-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,02142 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «ա» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի վրա գտնվող 0,02142 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 20/4:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2020թ. N 210-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏԱԿ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արտակ Անտոնյանի հայտը (մտից՝ N 779, 2020 թվականի հուլիսի 7)՝ **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Արտակ Անտոնյանին 2020 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոց N 7 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (Թույլտվություն N 6):

2. Արտակ Անտոնյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031377 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 11 250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ՝ մեկ եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Անտոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

17 հուլիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2020թ. N 211-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏԱԿ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշման, հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Արտակ Անտոնյանի դիմում-հայտը (մտից՝ 778, 2020 թվականի հուլիսի 7) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Արտակ Անտոնյանին տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 8):

2. Արտակ Անտոնյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Անտոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

17 հուլիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հուլիսի 2020թ. N 212-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՏԱԿ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի N 6-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արտակ Անտոնյանի դիմում-հայտը (մտից՝ N 780, 2020 թվականի հուլիսի 7). **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Արտակ Անտոնյանին 2020 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոց N 7 հասցեում գտնվող հանրային սննդի օբյեկտում ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 40):

2. Արտակ Անտոնյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք մեկ եռամսյակի համար 15 000 (տասնհինգ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արտակ Անտոնյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

17 հուլիսի 2020թ.
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2020թ. N 213-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՍՑԵՆ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Ռ. Ա. Դավթյանի դիմումը (մտից՝ N 877, 22.07.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի բնակիչ Ռուբիկ Աղաջանի Դավթյանին սեփականության իրավունքով պատկանող, Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 51-րդ շենքի N 3 բնակարանին նախկինում տրված հասցեի ճշտման նպատակով տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Կեչուտ, 6-րդ փողոց, շենք 13, բնակարան N 2:

2. Սույն որոշումը ենթակա է գնացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հուլիսի 2020թ. N 214-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՆԱՐԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» N 88 որոշմամբ հաստատված կարգի N 1 հավելվածի դրույթներով, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի բնակիչ Նարինե Հայրապետյանի դիմումը (մտից N 858, 20.01.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Թույլատրել Ջերմուկ համայնքի բնակիչ Նարինե Հայրապետյանին փոխելու սեփական բնակելի նշանակության անշարժ գույքի՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 5-րդ շենքի N 38 բնակարանի (հիմք՝ N 28072016-10-0007 վկայական), գործառնական նշանակությունը որպես հասարակականի՝ տարածք, առանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նարինե Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հուլիսի 22
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2020թ. N 215-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Ռ. Ա. Եղիազարյանի դիմումը (մտից 879, 23.07.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Կողմերի համաձայնությամբ, վաղաժամկետ՝ ս/թ հուլիսի 23-ից, լուծված համարել Ջերմուկ համայնքի ղեկավարի և Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Ռոման Արտեմի Եղիազարյանի միջև 2018 թվականի փետրվարի 19-ին կնքված (վավերացված է 19.02.2018թ. «Վայք» նոտարական տարածքի (Ջերմուկ) նոտարի N 35 սեղանամատյանում) Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 10-002-0009-0054 կադաստրային ծածկագրով 4 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիրը:

2. Ռոման Արտեմի Եղիազարյանին պարտավորեցնել դադարեցնելու «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության հետ՝ կառուցապատման իրավունքը փոխանցելու վերաբերյալ կնքված պայմանագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հուլիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հուլիսի 2020թ. N 216-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՀԱՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՉՎՃԱՐԱԾ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ,38-րդ հոդվածի1-ին մասի 4-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի, 58-60-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 251-րդ հոդվածի, 401-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի կողմից 01.07.2020թ. դրությամբ արձանագրված՝ Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի բնակիչ Վահան Անդրանիկի Ավետիսյանին պատկանող AUDI A4 1.8T մակնիշի, 35DC658 պետհամարանիշի, 2002 թ. արտադրության ավտոմեքենայի գույքահարկի գծով պարտավորությունը 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածի վերաբերյալ, որը կազմում է 141545 ՀՀ դրամ, որից տույժ՝ 32087 դրամ, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերը նշված փոխադրամիջոցի գույքահարկի գծով պարտավորությունները կատարված չեն՝ **որոշում եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Կարմրաշեն գյուղի բնակիչ Վահան Անդրանիկի Ավետիսյանից հօգուտ Ջերմուկ համայնքի բյուջեի գանձել 141545 (հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ գույքահարկի գումար (վճարման հաշվեհամար՝ 900365031252):

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Ջերմուկ համայնքի ղեկավարին՝դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Ջերմուկ համայնքի ղեկավարը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահան Անդրանիկի Ավետիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ